

Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2020-2021 ուսարի)
12-րդ դասարան (տևությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

- | | |
|---|------------------|
| 1. Ե՞րբ է գրի առնվել հայերի ծագման վրացական ավանդազրույցը.
ա/ XI-XIII դդ.
բ/ IX-XI դդ.
գ/ XI-XII դդ.
դ/ X-XII դդ. | 0,5 մ.
0,5 մ. |
| 2. Ո՞վ է ղեկավարել Լոռի-Փամբակի աշխարհագրորդ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ.
ա/ Գրիգոր Մանուչարյան
բ/ Մարտիրոս Վեքիլյան
գ/ Վալերիան Մադաթով
դ/ մելիք Աբով | 0,5 մ. |
| 3. Որտե՞ղ է հաստատվել Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II-ը.
ա/ Լամբրոն
բ/ Ծամնդավ
գ/ Պիզու
դ/ Մարաշ | 0,5 մ. |
| 4. Ո՞վ է նախագծել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին.
ա/ Մանուել
բ/ Մոմիկ
գ/ Տրդատ
դ/ Գագիկ | 0,5 մ. |
| 5. Ո՞ր թվականին է լուծարվել արևելյան (հայկական) լեգեոնը.
ա/ 1918 թ.
բ/ 1919 թ.
գ/ 1920 թ.
դ/ 1921 թ. | 0,5 մ. |
| 6. Քանի՞ վարչական շրջաններ են ստեղծվել 1930 թ..
ա/ 20
բ/ 25
գ/ 30
դ/ 26 | 0,5 մ. |
| 7. Ո՞ր կաթողիկոսն է կազմել «Կանոնագիրք Հայոց» երկը.
ա/ Սահակ Պարթև
բ/ Կոմիտաս
գ/ Ներսես Գ Տայեցի
դ/ Հովհան Գ Օձնեցի | 0,5 մ. |
| 8. Ե՞րբ է հիմնվել Մադրասի տպարանը.
ա/ 1771 թ.
բ/ 1772 թ.
գ/ 1773 թ.
դ/ 1786 թ. | 0,5 մ. |
| 9. Ե՞րբ է հիմնվել Կովկասի փոխարքայությունը. | 0,5 մ. |
| <hr/> | |
| 10. Ո՞ր երկրում էր 1960–ական թթ. խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների 18 %-ը պատկանում հայերին. | 0,5 մ. |
| <hr/> | |
| 11. Ո՞վ է դարձել Փոքր Հայքի թագավոր Ք.ա. 331 թ..
<hr/> | 0,5 մ. |
| <hr/> | |
| 12. Ո՞ր թվականին է Աշոտ Բագրատունին (ապագա Աշոտ Ա արքան) ճանաչվել հայոց սպարապետ.
<hr/> | 0,5 մ. |
| <hr/> | |
| 13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
ա/ Հայկական բանակի՝ առանց դիմադրության մուտքը Ասորիք
բ/ Տիգրան Մեծի գերիշխանության ընդունումը Վիրքի և Աղվանքի կողմից
գ/ Կորդոբի միացումը Մեծ Հայքին | |

- դ/ Արտաշատի հայ-հռոմեական պայմանագիրը
- ե/ Միհրդատ Եվպատորի ինքնասպանությունը
- զ/ Պտղոմայիս քաղաքի գրավումը հայկական բանակի կողմից
- է/ Տիգրան II-ի և Գոդերծ II-ի միջև հաշտությունը
- ը/ Ծովքի միացումը Մեծ Հայքին
- թ/ Տիգրանակերտի ճակատամարտը
- ժ/ Արաձանիի ճակատամարտը

1	2	3	4	5	6	7	8	9	10

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. «Պաշտպան Հայրենյաց»
2. «Միություն ի փրկություն»
3. Հնչակյան կուսակցություն
4. Հայ հեղափոխական դաշնակցություն
5. «Հայրենասերների միություն»
6. «Բարենպատակ ընկերություն»

- ա. Խաչատուր Կերեքցյան բ. Արսեն Կրիտյան գ. Խաչատուր Մալումյան
- դ. Հակոբ Կալոյան ե. Գաբրիել Կաֆյան զ. Ներսես Աբելյան

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Արշակ III-ին (374-378 թթ.) Մանվելն ամուսնացրել է իր դստեր՝ Վարազդուխտի հետ:
- բ/ Նվարսակում 484 թ. պայմանագիր է կնքվել Վահան Մամիկոնյանի և Շապուհի միջև:
- գ/ 1867 թ. վարչական փոփոխությամբ Անդրկովկասը բաժանվել է 10 նահանգների:
- դ/ 1877 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ է սկսել Օսմանյան կայսրության դեմ:
- ե/ Անդրանիկ Օզանյանը ծնվել է 1860 թ. փետրվարի 20-ին Շապին Կարահիսար քաղաքում:
- զ/ 1912 թ. մայիսին ՀՅԴ-ն պաշտոնապես խզել է իր հարաբերությունները երիտթուրքերի հետ:
- է/ 1916 թ. հունիսի 3-ին սկսվել է Շապին Կարահիսար քաղաքի հայկական թաղամասի ինքնապաշտպանությունը:
- ը/ Սարդարապատի հաղթական ճակատամարտը տևել է 1918 թ. մայիսի 20-ից 30-ը:
- թ/ 1928-1940 թթ. բանվորների թիվը Խորհրդային Հայաստանում հասել է 292,4 հազարի:
- ժ/ 1953 թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարել է, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

- ա/ Նախնադարյան հասարակության պատմությունը կազմում է համաշխարհային պատմության առաջին պարբերաշրջանը:
- բ/ Ք. ա. II հազարամյակի կեսերից սկսվել է շուրջ մեկ հազարամյակ տևած վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանը:
- գ/ Խեթերենում «(ա)սա» մասնիկով կազմվում էին տեղանունները, այսինքն՝ Հայաստա նշանակում է Հայք, Հայաստան:
- դ/ Ասորեստանյան աղբյուրներում Վանի թագավորությունը կոչվել է Բիայնիլի, իսկ տեղական արձանագրություններում՝ Նաիրի:

ե/ Աղվանից կոչվող եկեղեցին միավորում էր Այսրկովկասի արևելյան հատվածի, վրացական ու արևմտահայկական նահանգների հայ բնակչությանը:

զ/ Հայ իրականությունը փոխելու, այն «եվրոպականացնելու»՝ ազատականների հայացքները համարելով օգտակար՝ ազգային-պահպանողականները համագործակցել են նրանց հետ:

է/ Նախիջևանի խանությունը, որի կառավարիչն էր սարդարը, հիմնականում ներառել է Արարատյան դաշտը:

ը/ 1960-ական թթ. նրանց, ովքեր ընտրել են խորհրդային իրականությունը փոփոխելու պայքարի ուղին, սկսել են կոչել այլատյացներ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Ք. ա. 5 թ. Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկել իր որդեգիր Գայոս Կեսարին:

բ/ 65 թ. Տրդատ ը մեծ շքախմբով՝ իր ընտանիքով և 3000 հայ ու պարթև հեծյալներով, ուղևորվել է Հռոմ:

գ/ Թեյշեբա և Շիվինի աստվածները Խալդիի հետ միասին կազմել են Վանի թագավորության աստվածների գերագույն եռյակը:

դ/ Հայոց մեծ թվականի սկիզբ է համարվել 622 թվականը:

ե/ 359 թ. պատերազմ է սկսվել Հռոմի և Պարսկաստանի միջև:

զ/ 450 թ. ապրիլին հայ նախարարները ժամանել են Տիգրան:

է/ Թուրքական զորքերի՝ դեպի Բաքու ռազմարշավը սկսվել է 1918 թ. հունիսի կեսերին:

ը/ 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզում ստորագրվել է հայկական պահանջների համատեղ հուշագիր:

թ/ 1920 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-թուրքական պայմանագրով հայաթափված Կիլիկիան հանձնվել է Թուրքիային:

ժ/ 1938 թ. դեկտեմբերի 5-ին ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ համագումարում ընդունվեց երկրի նոր սահմանադրությունը:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

«Հայաստանը Հուսիսհայկանոսի դարաշրջանում» ծանրակշիռ աշխատության հեղինակը Հակոբ Մանանդյանն է:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Անհրաժեշտ է գործել արագ: Եթե բավարարվենք մասնակի կտրորածով, ինչպես եղավ 1909 թ. Ադանայում և այլ շրջաններում, ապա դա օգուտի փոխարեն վնաս կբերի, քանի որ վրանգ կստեղծենք արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես մտադիր ենք վերացնել ճանապարհից՝ արաբներին և քրդերին: Հայ տարրը պետք է հիմքից արմատախիլ անել, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր հողում, և մոռացվի բուն այդ անունը: Հիմա պատերազմ է, այսպիսի հարմար առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունն ու համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ եթե նրանք իմանան էլ, կկանգնեն կատարված փաստի առաջ, և դրանով իսկ հարցը կսպառվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է հայերի համընդհանուր բնաջնջման բնույթ կրեն»:

ա. Որքա՞ն հայեր են կոտորվել 1909 թ. Ադանայի նահանգում:

բ. Հայերի ոչնչացումը պանթուրքիզմի ծրագրի ո՞րերորդ փուլի շրջանակում է իրականացվել:

գ. Որքա՞ն հայկական եկեղեցիներ են ավերվել և կողոպտվել Մեծ եղեռնի ժամանակ:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ե՛րբ է առաջացել ֆրանկների պետությունը. 0,5 մ.
 ա/ 500 թ. բ/ 800 թ.
 գ/ 732 թ. դ/ 751 թ.
2. Ո՞վ է «Սիքստինյան Տիրամայրը» նկարի հեղինակը. 0,5 մ.
 ա/ Լեոնարդո դա Վինչի բ/ Միքելանջելո Բուոնարոտի
 գ/ Ռաֆայել Սանտի դ/ Ռեմբրանդտ
3. Ե՛րբ են ավարտվել Պելոպոնեսյան պատերազմները. 0,5 մ.
 ա/ Ք.ա. 415 թ. բ/ Ք.ա. 431 թ.
 գ/ Ք.ա. 404 թ. դ/ Ք.ա. 421 թ.
4. Որտե՞ղ է տեղի ունեցել դաշնակիցների Մեծ եռյակի՝ Ռուզվելտի, Չերչիլի և Ստալինի հանդիպումը 1943 թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը. 0,5 մ.
 ա/ Յալթա բ/ Թեհրան
 գ/ Լոնդոն դ/ Պոտսդամ
5. Ինչպե՞ս էր կոչվում ԱՄՆ քաղաքական կուրսը, որի համաձայն 1948-1951 թթ. 12.4 մլրդ դոլար գումար է տրամադրվել Արևմտյան Եվրոպայի երկրներին. 0,5 մ.

6. Գտե՛ք կապը իրադարձությունների բովանդակությամբ և համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
1. Եդեսիա
 2. Ակրա
 3. Անտիոք
 4. Լատինական կայսրություն
 ա. 1291 թ. բ. 1268 թ. գ. 1204 թ. դ. 1144 թ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա/ Նաբոպալասարը Ք. ա. 626 թ. թագադրվել է որպես Բաբելոնիայի արքա:
 բ/ Իր հեղինակության շնորհիվ Սոլոնը, սկսած Ք. ա. 443 թ., 15 տարի վերընտրվել է որպես առաջին ստրատեգոս:
 գ/ Պլատոնը Սոկրատեսի համընդհանուր բանականության սկզբունքը վերափոխել է սուբյեկտիվ իդեալիզմի ուսմունքի:
 դ/ Դիոկղետիանոսին փոխարինած Կոստանդինոսը 333 թ. մայրաքաղաքը հռչակել է Բոսֆորի ափին գտնվող Բյուզանդիոն քաղաքը, որը վերանվանել է Կոստանդնուպոլիս:
 ե/ Լյու Բանը Ք. ա. 202 թ. իրեն հայտարարել է կայսր՝ հիմնադրելով Ավագ Հան հարստության կայսրությունը Չինաստանում:
 զ/ 1392 թ. Դոն գետի ափին՝ Կուլիկովոյի դաշտում, իշխան Դմիտրին հաղթել է մոնղոլներին:
 է/ 1910-1912 թթ. պատերազմելով Օսմանյան կայսրության դեմ՝ Իտալիան նրանից զավթել է Տրիպոլիտանիան և Կիրենաիկան՝ դրանց տարածքում ստեղծելով Ալժիր գաղութը:
 ը/ 1936 թ. Ռեզա խանը Մեջլիսի որոշմամբ հռչակվել է Իրանի շահ՝ հիմնելով Փահլավիների արքայատոհմը:
 թ/ Չինաստանում 1925-1927 թթ. տեղի է ունեցել մեծ հեղափոխություն՝ Գոմինդան կուսակցության գլխավորությամբ:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

08.02.2021 թ.